Ձև N 1

ՀԱՅՏ

Հայաստանի Հանրապետության համայնքներում մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրերի իրականացմանն ուղղված սուբվենցիաների

Առաջարկ-նախագիծը, որի հիման վրա մշակվել է մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագիրը	«ԳՆԴԵՎԱԶ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳԻՐ» Փոխարինման ենթակա խողովակաշարի 1 կմ-ը նախատեսվում է փոխարինել խողովակաշարի սկզբնամասում, իսկ 2-րդ կիլոմետրը խողովակաշարի վերջնամասում մինչև ներքին ցանցի սկիզբը:
Առաջարկ-նախագիծ ներկայացրած համայնքի բնակիչը /հասարակական միավորումը/քաղաքացիական նախաձեռնությունը	Գնդեվազ գյուղի բնակիչ՝ Մեսրոպ Արամի Հարությունյան (անձնագիր՝ AS0306946)
Առաջարկ-նախագծի հանրային քննարկումը	https://jermuk.am/Pages/DocFlow/Default.aspx?nt=1&a=v&tv=-4&g=cb2434de-b764-4885-b47a-7413fb507534 https://jermuk.am/Pages/Home/newsdetails.aspx?nID=1771 https://jermuk.am/upload/DocFlow/PublicDiscussion/Fr2432910071781860_.pdf https://jermuk.am/Pages/Home/newsdetails.aspx?nID=1779
Առաջարկ-նախագծի օգտին քվեարկության արդյունքները	*Քվեար* Քվեարկության արդյունքների վերաբերյալ համայնքի պաշտոնական կայքի համապատասխան տեղեկատվությանը հղումը՝ https://www.jermuk.am/upload/DocFlow/PublicDiscussion/We2430609411031764_IMG_00011.pdf քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների ընդհանուր թվաքանակը՝ 6786, առաջարկ-նախագծի օգտին քվեարկածների թվաքանակը՝ 210 և մասնակցելու իրավունք ունեցողների ընդհանուր թվաքանակի 3 %-ը:
Ծրագրի անվանումը	«Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի խմելու ջրի ջրագծերի հիմնանորոգում»
Մարզը, համայնքը, բնակավայրը	Վայոց ձորի մարզ, Ջերմուկ համայնք, համայնքում ընդգրկված բնակավայրեր՝ Ջերմուկ քաղաք, Կեչուտ և Գնդեվազ գյուղեր:
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	Ջերմուկ համայնք՝ 8291 մարդ, ծրագիրն ընդգրկող բնակավայր՝ գյուղ Գնդեվազ՝ 868 մարդ:
Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակը բնակչությանը խմելու ջրի մատակարարման հուսալի, կայուն, անվտանգ և մատչելի ծառայությունների ապահովումը, մատակարարման և կառավարման համակարգերի արդիականացումն է, ինչպես նաև ջրային պաշարների արդյունավետ և խնայողական օգտագործումը:
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման	Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի խմելու ջրի մատակարարումը իրականացվում է «Յոթ աղբյուր» և «Տաք ջրեր» տեղանքների աղբյուրներից: Առաջին աղբյուրը գտնվում է 2022 թվականին ադրբեջանական սեպտեմբերյան

անհրաժեշտությունը	ագրեսիայի հետևանքով ձևավորված նոր շփման գծին մոտ: Այս տեղանքից մատակարարվող ջուրը ապահովում է խմելու ջրի մի մասը, իսկ մյուս մասը մատակարարվում է «Տաք ջրեր» տեղանքից: Այս խողովակաշարը կառուցումից ի վեր չի հիմնանորոգվել: Խողովակաշարի սկզբնամասի 1 կիլոմետրանոց և Գնդեվազ գյուղին մոտ 1 կիլոմետրանոց հարվածը խիստ քայքայված է, որի հետևանքով կա խմելու ջրի զգալի կորուստ, առկա ջրի քանակը չի բավարարում գյուղի բնակիչների կարիքները, եղածն էլ չի բավարարում ջրի որակի ստանդարտներին: Հայ-ադրբեջանական լարված հարաբերությունների ֆոնին անհրաժեշտ է գյուղն ապահովել խմելու ջրի մատակարարման, լիարժեք գերծող մեկ այլ խողովակաշարով, որը հնարավորություն կտա «Յոթ աղբյուր» տեղանքի ջրամատակարարման համակարգի խափանման դեպքում գյուղն ապահովել խմելու ջրով: Ծրագիրը չի համընկնում համայնքի 2024 թվականի բյուջեով նախատեսված այլ ծրագրերի հետ:
Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին	Գյուղական բնակավայրերում խմելու ջրի ջրագծերի և աղբյուրակապերի հիմնանորոգումը համայնքի կարևոր խնդիրներից են, որոնք ընդգրված են Ջերմուկ համայնքի զարգացման հնգամյա՝ 2022-2026 թթ. ծրագրում, ինչն էլ, իր հերթին, բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրից: Մասնավորապես, դրա 3-րդ բաժնի (ենթակառուցվածքների զարգացում) 3.3 (ջրային տնտեսություն) գլխում ամրագրվել է, որ՝ «ՀՀ Կառավարության գործունեության հիմքում դրված է ջրային համակարգերի արդիականացման և ներդրումների ներգրավման ապահովումը, ոլորտի կազմակերպությունների գործունեության և պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարման արդյունավետության բարձրացումը, ոլորտը կարգավորող օրենսդրության բարելավումը, ջրային պաշարների արդյունավետ և խնայողական օգտագործումը»: Ծրագրի հիմնախնդիրն է հիմնանորոգել Գնդեվազ գյուղի «Տաք ջրեր» տեղանքից սնվող խմելու ջրի ջրագծի 2 կիլոմետրանոց հատվածը: Ծրագրի իրականացման նպատակին հասնելու համար ակնկալվող արդյունքներն են՝ 1. Նվազեցնել ջրի կորսուստը, 2. Ապահովել Հայաստանի Հանրապետության պետական ստանդարտների պահանջներին համապատասխանող որակի խմելու ջուր, 3. Բարձրացնել ջրօգտագործման արդյունավետությունը, 4. Ապահովել գյուղի շրջօրյա ջրամատակարարումը, 5. Ապահովել նորմատիվային ճնշումները: Միջնաժամկետ արդյունքում ակնկալվում է, որ համայնքի մի բնակավայր կունենա խմելու ջրի որակի պետական ստանդարտներին համապատասխանող խմելու ջուր և շուրջօրյա ջրամատակարարում: Երկարաժամկետ արդյունքում ակնկալվում է, որ համայնքը կունենա գյուղին խմելու ջրով մատակարարման հուսալի և այլընտրանքային խողովակաշար:
Ծրագրի արդյունքներին հասնելու միջոցառումները	Ծրագրի արդյունքին հասնելու գործողություններն և միջոցառումներն են. •հիմնանորոգման ենթակա խողովակաշարի տեղանքի ուսումնասիրություն՝ 29.03-01.04.2024թ.,

•հիմնանորոգման աշխատանքների նախագծման տեխնիկական բնութագրի կազմում, ՃՀԱ տրամադրում՝ 01.04-07.04.2024թ.,

•աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների ձեռք բերման մրցույթի հայտարարում, դրանց փորձաքննության անցկացում՝ 08.04.-25.05.2024 թ.,

•շինարարական աշխատանքների կատարման մրցույթի հայտարարում, հաղթող մասնակցի ընտրում՝ 30.05.-25.06.2024թ.,

•մրցույթում հաղթած կազմակերպության հետ պայմանագրի կնքում՝ 05.07.2024թ.

•շինթույլտվության տրամադրում՝ 10.07.2024թ.,

•կապալի պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացում, աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական և հեղինակային հսկողության իրականացում, աշխատանքների արդյունքների ընդունում՝ 10.07-20.12.2024թ.:

Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա

Ծրագրի ուղղակի շահառուներն են գյուղի 200 բնակիչներն են՝ 60 տնային տնտեսությունից, ինչպես նաև յուրաքանչյուր տարի բնակավայր այցելող հազարավոր զբոսաշրջիկները:

Ծրագրի իրականացման արդյունքում զգալիորեն կբարելավվի գյուղի բնակիչների կենսական պայմանները: Բնակիչներն կունենան շուրջօրյա ջրամատակարարում, կապահովվի նորմատիվային ճնշումը, կտեղադրվեն քլորատորային կայաններ՝ քլորացման սարքերով, որի շնորհիվ կապահովվեն ջրի որալի պետական ստանդարտները:

Համայնքի 2023 թվականի փաստացի և 2024 թվականի հաստատված բյուջեն

(հազ.դրամ)

	2023 թ. փաստացի	***2024 թ. հաստատված***
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտներ, *որից՝*	***717,936.482***	***989,963.361***
- վարչական բյուջեի եկամուտներ, որից	*597,225.363*	*720,783.561*
- Սեփական եկամուտներ	*433,659.992*	*453,282.501*
- ֆոնդային բյուջեի եկամուտներ	*120,711.12*	*269,179.80*
- Տարեսկզբի ազատ մնացորդ՝ վարչական բյուջե	***31,969.067***	***43,967.159***
- Տարեսկզբի ազատ մնացորդ՝ ֆոնդային բյուջե	***130,732.977***	***5,449.74***
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, *որից՝*	***804,365.228***	***1,039,380.26***
- վարչական բյուջեի ծախսեր	*585,227.271*	*764,750.72*
- ֆոնդային բյուջեի ծախսեր	*219,137.957*	*274,629.54*
Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսերը, *որից՝*		
- Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում	*1,760.10*	*25,448.74*
- Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	*59,405.964*	*11,618.00*
- գյուղատնտեսություն	*3,800.00*	*-*
- Ճանապարհային տրանսպորտ	*3,537.239*	*12,906.70*

	- Խողովակաշարային տրանսպորտ	10,361.876	26,856.40
	- զբոսաշրջություն	275.00	-
	- աղբահանություն և սանիտարական մաքրում	13,019.615	-
	- բնակարանային շինարարություն	15,611.182	-
	- համայնքի զարգացում	1,395.00	71,615.60
	- ջրամատակարարում	19,274.497	116,510.80
	- արտաքին ցանցի լուսավորություն	28,943.157	4,673.30
	- հանգստի գոտիների կառուցում	50,901.568	-
	- կինեմատոգրաֆիա	40.00	5,000.00
	- նախադպրոցական կրթություն	10,812.759	-
Ծրագրի ընդհանուր բյուջեն, որից՝	34,000.00 *հազ. դրամ (100%)*		
պետական ֆինանսավորման գումարը	28,332.20 *հազ. դրամ (83.33%)*		
համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը	5,667.80 *հազ. դրամ (16.67%)*		
Ծրագրի իրականացման փուլությունը	*Սկիզբը՝ « 02 » ապրիլի 2024 թ.* *Ավարտը՝ « 20 » դեկտեմբերի 2024 թ.*		
Ծրագրի ծախսերը	Ներկայացված է ծրագրով նախատեսվող ծախսերի խոշորացված հաշվարկները (հազար ՀՀ դրամ)՝ • նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերում՝ 2,000.0, • նախագծային փաստաթղթերի փորձաքննություն՝ 150.0, •շինարարական աշխատանքների ընդհանուր նախահաշվային գին՝ 31,850.0, այդ թվում՝ -շինարարական աշխատանքների կատարում՝ 30,000.0, -տեխնիկական հսկողություն՝ 1,500.0, -հեղինակային հսկողություն՝ 350.0:		
Ամսաթիվ	*« 29 » մարտի 2024 թ.*		

Համայնքի տնտեսական պատասխանատու՝ Ստեփանոս Վարդանյան
Հեռ.՝ 098.17.62.71, էլ.փոստ՝ SipanVardanyan@gmail.com

Համայնքի ղեկավար Վահագն Արսենյան
(անունը, ազգանունը)